ԾՐԱՐԵՐԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ Ի ՀՐԱՀԱՆԳՈՒԹԻՒՆ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ՝ ՎԱՍՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ - ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ՀԱՅՈՑ.

ՄԱԿԱՐ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։

Յօրէ բացման եկեղեցական - ծխական ուսումնարանաց հայոց հոգալ հոգայաք զբարեկարգութենէ նոցին և հնարս խնդրէաք ածելոյ զնոսա ի վիճակ ցանկալին յառաջադիմութեան և յարատև պահպանութեան։ Ըստ այսմ և կամ եղև մեզ յանցելումն ամի՝ զկնի կարևոր փոփոխութեանց՝ տալ առաջնորդացդ հայոց յանսահերիւր ի հրահանգութիւն զկանոնս եկեղեցական - ծխական ուսումնարանաց մերոց՝ յորս և որոշեցաք զսահման պարտուց և զիրաւանց իւրաքանչիւր ուրուք ի պաշտօնէից և զեղանակ կառավարութեան ուսումնարանացն։ Ի կանոնս յայնոսիկ նախ սահմանեցաք զկարգ ընդարութեան և զհաստատութեան ուսուցչաց և զուսուցչուհեաց ըստ յօդուածոցն 41—46։ և յետ պատրաստելոյ զընդհանուր

ցուցակ անձանց ընտրելեաց ի պաշտօն ուսուցչութեան, հրամայեցաք վարիլ ըստ ամենայնի համաձայն կանոնաց և հրահանգութեանց մերոց, ընտրելով զպաշտօնեայսն ի ցուցակէ ոնտի. և այս՝ այնու զգուշաւոր նախատեսութեամբ, զի մի յընթացս ժամանակաց նուիրականն գործ դաստիարակութեան մանկանց եկեղեցւոյ անկցի ի ձեռս անպատրաստից և թերուսումն անձանց։ Արդ՝ ի նմին յարատևեալ մեր ի կարծիս, հոգ յանձին կալաք առնել զնոր ընտրութիւն անձանց արժանաւորաց և յետ վերստին տուգելոյ ի տեղեկութեանց անտի՝ գտելոց առ մեզ, ըստ զօրութեան նախկին կոնդակաց մերոց՝ արձակելոց առ ձեզ, հրամայեցաք բառնալ

յընդհանուր ցուցակէ անտի զկարգսն «Զ» «Է» և «Թ» բացառութեամբ սակաւաթիւ ընտրելոց ոմանց, որոց և շնորհեցաք արտօնութիւն շարունակելոյ զպաշտօն ուսուցչութեան յեկեղեցական-ծխական ուսումնարանս մեր։ Արդ՝ յանձն արարեալ ձեզ զվերակազմեալն զայն ցուցակ, պատուէր հրամանի կնքեմք ճշտիւ հետևիլ ցուցմանն յիշատակեալ կանոնաց մերոց և ընդհանուր ցուցակին՝ հաստատելոյ ի մէնջ։ Եւ զորս յանցելում ամի ստիպմամբ հարկին ի յարգանս միջնորդութեան ոմանց ի ձէնջ հրամայեցաք կարգել արտաքոյ ընդհանուր ցուցակին ի պաշտօն ուսուցչութեան եկեղեցական-ծխական ուսումնարանաց մերոց, թէ զեկեղեցականս և թէ զաշխարհականս ի զանազան դասակարգաց, եթէ չիցեն մուծեալ ի վերակազմեալս յայս ցուցակ, արձակել ամենևին և պատուիրել նոցա, եթէ կամիցին յարատևել ի պաշտամանն, խնդրամատոյց լինել յանուն մեր ըստ սահմանեալն կարգի։

Ցամաց հետէ հասու եղեալ է մեր և գիտեմք հաւաստի, զի ընթացք յառաջադիմութեան ուսմանց և բարոյականն դաստիարակութեան յեկեղեցական-ծխական ուսումնարանս մեր, կախեալ է առաւելապէս զվիճակէ անտի դաստիարակաց, ուսուցչաց ասեմք և ուսուցչուհեաց, որք կարգեալ լինին ի պաշտօն առանձին իմն պայմանախօսութեամբ ընդ հոգաբարձութեանցն. յորմէ յերևան գան անտեղի սակարկութիւնք և յապաղումն նշանակութեան ուսուցչաց, ևս և որ մեծն է քան զամենայն՝ ձգտումն ամենայն ուրուք յուսուցչաց և յուսուցչուհեաց յայնպիսի տեղիս պաշտօնավարութեան, յորս կարիցեն շահիլ թոշակս ցանկալիս անձանց իւրեանց. ըստ այսմ և ուսումնարանք՝ ճոխացեալք արդեամբք մտից, առ ի գտանել ի պաշտօն զարժանաւորագոյնսն յուսուցչաց՝ սահմանեն քանակս թոշակաց առաւելագոյնս, քան որք ի սակաւաձեռն արդեանց անտի լցուցանեն զպէտս ուսումնարանաց. աստի յառաջանան յաճախակի տեղափոխութիւնք ուսուցչաց, որ գլխաւոր պատճառն է խանգարման կանոնաւոր ընթացից ուսման։ Առ ի առնուլ զառաջս այսպիսեաց անպատեհութեանց՝ մեք 33-րդ յօդուածով կանոնաց

մերոց սահմանեցաք, զի հոգաբարձուք ի մտանելն ի վարժումն պաշտաման՝ կազմեսցեն՝ զնախահաշիւ մատակարարութեան տարեկան ծախուց առ եօթնամեայ ժամանակն պաշտօնավարութեան իւրեանց և յետ ընդունելոյ զհաստատութիւն այնորիկ՝ վարեսցին ըստ ամենայնի համաձայն այնր նախահաշուի. իսկ 39-րդ յօդուածովն թողաք ի ձեռս հոգաբարձուաց զիրաւունս սահմանելոյ զթոշակ համօրէն պաշտօնէից հաստատութեանն ուսումնարանի, հայեցեալ ի դրամական կարողութիւն իւրաքանչիւրոյ յուսումնարանայն: Այն ինչ ակն ունէաք, թէ այսոքիւք հրահանգութեամբք մերովք ունէին անխափան ընթանալ համօրէն հոգաբարձութիւնք ի բարեկարգութիւն և ի պայծառութիւն եկեղեցական-ծխական ուսումնարանաց մերոց, ցաւ ի սիրտ հասեալ եղեւ ծանեաք, զի ի տեղիս տեղիս, որպէս ի քաղաքս նոյնպէս և ի գիւղօրայս, հոգաբարձութիւնքն, անգիտանալով թէ յորպիսեաց ինչ պատճառանաց, անցեալ զանցեալ են զկանոնաւս և բաղումք իսկ անձեռնահասք լեալ են ի կազմումն յիշեալ նախահաշուի: Արդ՝ կամելով մեր դիւրութիւնս ընծայել գործոյն յառաջադիմութեան եկեղեցական-ծխական ուսումնարանաց մերոց, հրամայեցաք կազմել զցուցակս ուսուցչաց և պաշտօնէից և տարեկան թոշակաց նոցին յիւրաքանչիւր յեկեղեցական-ծխական ուսումնարանս, զորս և յանձնեմք ձեզ ի գործադրութիւն: Ցուցակքն այնոքիկ յօրինեալք «կարգ առաջին և երկրորդ» սահմանեն զկարգ ուսուցչաց և զքանակ տարեկան թոշակաց նոցին յերկուս վիճակս. ուսումնարանք, որք ճոխացեալք են տարեկան մուտիւք արդեանց, պարտին վճարել ուսուցչաց կամ ուսուցչուհեաց կրօնի, լեզուի հայոց, լեզուի ռուսաց և ձեռագործութեան քսանական ռուբլիս առ ժամն, ուսուցչաց կամ ուսուցչուհեաց թուաբանութեան, բնագիտութեան, երգեցողութեան, վայելչագրութեան և գծագրութեան տասն և հնգական ռուբլիս առ ժամն. այս է կարգն առաջին: Իսկ ուսումնարանք, որք շատացեալք են սակաւաձեռն արդեամբք մտից, հատուցեն ուսուցչաց կամ ուսուցչուհեաց կրօնի, լեզուի հայոց, լեզուի ռուսաց և ձեռագործութեան տասնեհնգական ռուբ-

չիս առ ժամն և ուսուցչաց կամ ուսուցչուհեաց թուաբա-
նութեան, բնագիտութեան, երգեցողութեան, վայելչագրու-
թեան և գծագրութեան առանձնական ռուբլիս առ ժամն. այս
է կարգն երկրորդ: Ըստ այսմ եղիցի մատակարարութիւն
թոշակաց յամենայն յեկեղեցական ուսումնարանն մեր, յա-
ւելլով ի տարեկան թոշակ այնոցիկ ուսուցչաց կամ ուսուց-
չուհեաց, որք ընտրեալ լինին յաւագութիւն յերկդասեան ու-
սումնարանս՝ երկու հարիւր ռուբլիս և ի միդասեանսն՝ մի
հարիւր ռուբլիս. իսկ ուսուցչաց կամ ուսուցչուհեաց, կար-
գելոց ի վերակացութիւն՝ յերկդասեանսն աղայոց յիսնական
ռուբլիս, յերկդասեանսն օրիորդաց մի հարիւրական ռուբլիս,
ի միդասեանսն աղայոց յիսնական ռուբլիս և օրիորդաց՝
եօթանասուն և հնգական ռուբլիս: Յանձն առնեմք Գե-
րագահութեանդ հոգալ զարժանիս զի յամենայն նախա-
հաշիւս Հոգաբարձութեանց եկեղեցական-ծխական ուսում-
նարանաց վճարելի մուծցի կարգն առաջին և ի դէպս ան-
հնարաւորութեանն միայն նորեսցի նոցա կարգն երկրորդ:

Առ ի նպաստել յարատև պահպանութեան ուսումնա-
րանաց մերոց յորդոր լիցի Հոգաբարձութեանց և աւագ
ուսուցչաց կամ ուսուցչուհեաց ի տեղիս տեղիս ուր սա-
կաւաձեան են արդիւնք մինչ պահպանել ուսումնարանս,
բաժանմունք որոց միացեալ են ի միում դասարանի ըստ
հետևելումն. մարթ է միաւորել ի միում դասարանի զերիս
բաժանմունսն Ա. Բ. Գ. ի գումար դասուց 26 ըստ ձևոյն
Ա. ի ձեռս միոյ և եթ ուսուցչի, որ ձեռնհաս իցէ մատա-
կարարել զամենայն ուսմունսն երից միացեալ բաժանմանց:
Ըստ նմին օրինակի մարթ է միաւորել և զԴ. և զԵ. բաժան-
մունսն ի միում դասարանի ի գումար դասուց 30 ի ձեռն միոյ
և եթ ուսուցչի, որ ձեռնհաս իցէ մատակարարել զամենայն
ուսմունս երկուց միացեալ բաժանմանցն: Ի դէպս բազմու-
թեան աշակերտելոց Ա. բաժանման մարթէ միաւորել զԲ. և
զԳ. բաժանմունսն ի միում սենեկի ի գումար դասուց 26
ըստ ձևոյն Բ. ի ձեռն միոյ և եթ ուսուցչի, որ ձեռնհաս իցէ
մատակարարել զամենայն ուսմունսն երկուց միացեալ բաժան-
մանցն: Իսկ ի դէպս կարի սակաւութեան աշակերտելոց՝ մարթ

է շատանալ միով և եթէ բաժանմամբ ըստ ձևոյ Գ. ըստ պահանջից կրթութեան աշակերտելոցն. այն է՝ առաջին բաժանմամբն ուրոյն, երկրորդաւն՝ ուրոյն և երրորդաւն՝ ուրոյն, առնելով նոր ընդունելութիւն աշակերտելոց յերկրորդումն կամ՝ յերրորդումն ամի։

Ըստ օրինակի բաշխմանդ այդորիկ եղիցի և մատակարարութիւն դասուց և թոշակաց ի զուգընթացսն մէն մի բաժանմանն։

Եկեղեցական - ծխական ուսումնարանսն, որք կամիցին ի պատճառս առատութեան արդեանց առնել արտակարգ մատակարարութիւնս թոշակաց, պատուիրեմք Գերապատուութեանդ տալ նոցա հրահանգութիւնս, զի կազմեսցեն զնախագիծ առանձին կոպարի, սրոշմամբ յականէ յանուանէ անձանց, զորս կամիցին ընտրել ի պաշտօն և քանակի թոշակաց, զորս կամիցին սահմանել առ ժամն իւրաքանչիւր, և առաջի արասցեն ընդ ձեռն ձեր ի նկատողութիւն մեր և ի հաստատութիւն։

Խստիւ պատուիրեմք Գերապատուութեանդ՝ գուն գործել յաւելուլ զթիւ միդասեան և երկդասեան ուսումնարանաց ի կանոնաւոր ամբողջութեան նոցին, և եթէ հնար է, խուսափել ի բազմացուցանելոյ զթիւ զուգընթացից բաժանմանցն ի միում և ի նմին ուսումնարանին։

Սեպուհ պարտ անձին լիցի իւրաքանչիւր ումեք յառաջնորդացդ՝ յորդոր լինել ժողովրդականաց և հոգաբարձութեանց բանալ յիւրաքանչիւր քաղաքս առ եկեղեցեօք երկդասեան և միդասեան ուսումնարանս՝ ի լրումն պլիտոյից բազմաթիւ թաղականաց երկուց սեռից. հարկ անհրաժեշտ դնեմք ի վերայ առաջնորդացդ օժանդակել բացման և պահպանութեան յիւրաքանչիւր փոխանորդութեան գէթ միոյ միոյ երկդասեան ուսումնարանի լիակատար թուով բաժանմանց վասն երկուց սեռից, գիտելով քաջ՝ զի պահպանութիւն այդպիսւոյ ուսումնարանի մեծապէս նպաստիցէ կրթութեան հայերամ մանկանց ի կրօնի և ի լեզուի հայոց և բարգաւաճման թեմական դպրոցաց մերոց և հոգևոր ճեմարանի, որք առանց կանոնաւոր զարգացման եկեղեցական-

ծխական ուսումնարանաց մերոց ունին ընթանալ ի թերութեան և յանկատար վիճակի։ Ըստ հաւատոյ տեղեկութեանց՝ մատուցելոց մեզ ընդ ձեռն ձեր, գիտեմք՝ զի աղբիւրք եկեղեցական արդեանց մատակարարեն եկեղեցական-ծխական ուսումնարանաց մերոց գումարս առաւելագոյնս քան զնշանակեալն ի յիշատակեալ կոպարան։

Ակներև է ապաքէն զի բացակայութիւն կանոնաւոր և լիակատար կազմակերպութեան երկդասեան եկեղեցական ուսումնարանաց երկուց սեռից, թէ ի փոխանորդութիւնս և թէ ի բազմահայ քաղաքս և յաւանս վիճակաց ձերոց է արգասիք անկոպար տնտեսութեան արդեանց եկեղեցականացուստի և ցաւ ի սիրտ տեսանեմք զբազմաթիւ երամս մանկանց երկուց սեռից անխնամս յուսման և դատարկաշրջիկս։ Առաջնորդացդ է գործ դիւրութիւնս ընծայել ժողովրդականաց առ ի լնուլ զպէտս նորահաս սերնդոց, վասն որոյ յետ կազմակերպելոյ գէթ զմի մի երկդասեան ուսումնարանս վասն երկուց սեռից, պատուիրեմք, ի տեղիս՝ ուր բազմաթիւ են եկեղեցիք հայոց ի միում վայրի, յայնպիսիսն յանուն մէն մի եկեղեցւոյն բանալ ուսումնարանս միդասեանս կամ որիշ որիշ բաժանմամբ և կամ միացելովք։ Որ ինչ առ ուսումնարանս գիւղօրէից, ուր չիք հնար պահպանելոյ զայնոսիկ լիակատար թուով բաժանմանցն, յանձն առնեմք Գերապատուութեանդ տնօրինել, զի կազմակերպութիւն ուսումնարանացն եղիցի միացեալ բաժանմամբ։

Հուսկ ուրեմն՝ պատուէր հրամանի աւանդեմք Գերապատուութեանդ՝ ամենայն արթնութեամբ հսկել ի վերայ ամենայն գործողութեանց հոգաբարձութեանց և մանկավարժական ժողովոց, ընտրելով ընդ ձերով անմիջական պատասխանատուութեամբ ի նախագահութիւն հոգաբարձութեանց և յաւագ ուսուցչութիւն զանձինս՝ հաստնացեալս մտօք և բարուք, հաւատարիմս կոչման իւրեանց, զարդարեալս քրիստոնէական ջերմեռանդութեան վարուք. առաւելապէս փոյթ կալջիք յընտրութեան անդ աւագ ուսուցչաց և աւագ ուսուցչուհեաց հայիլ ի մանկավարժական հմտութիւնս ընտրելեաց և ի հեզահամբոյր բարս բնութեան նոցին։

Տնօրինեսջիք յանձն առնել նոցա ժամս դասուց ոչ առաւել քան զ24 և ոչ նուազ քան զ18, յատկացուցանելով վերակացուին կարգաւոր՝ դասուց առարկայի նորին այլում ուսմք յուսուցչաց, նշանակելոց ի կոպարին, և միմիայն ի կարի բացառական դէպս ներեսջիք կարգել զայլ ոք արտաքոյ քանակութեան անձանց կոպարին և այն՝ ոչ առաւել քան զմի անձն։

Եւ եթէ հնար իցէ, ընտրեսջիք յաւագ ուսուցչութիւն զարժանաւորագոյնն ի քահանայից՝ մնալով յընդհանուր ցուցակի, յատկացուցանելով նոցա զդասս և եթ կրօնի։

МАКАР

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուեալ ի վեցերորդ ամի Հայրապետութեան մերոյ
ի 10-ն յունիսի 1890 ամի Փրկչական
և յազգային Թուականութեան ՌՅԼԹ.

Թիւ 233.

Ի Սուրբ Էջմիածին